STATE AGENCY
,, SPORT AND YOUTH PROJECT
IMPLEMENTATION UNIT,,
AT THE MINISTRY OF SPORT AND YOUTH
AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

ГОСУДАРСТВЕННОЕ УЧРЕЖДЕНИЕ
,, БЮРО ПО РЕАЛИЗАЦИИ СПОРТИВНЫХ
И МОЛОДЕЖНЫХ ПРОГРАММ,,
МИНИСТЕРСТВА СПОРТА И ПО ДЕЛАМ
МОЛОДЕЖИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
ՏՆՕՐԵՆ

22 Saryan str.,Yerevan, 375001 Armenia Երևան 375001, Սարյան 22 Ереван,375001, Сарьяна 22
Հեռ/Тел; (374 1)52 83 02 (374 1)52 69 33

N1/15
13.02.14թ.

ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ
ՊԱՐՈՆ Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Անանյան

Ձեզ եմ ներկայացնում Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից հայտարարված <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11 /1>> ծածկագրով ընթացակարգի հրավերի մասին հայտարարությունը՝ gnumner.am կայքում հրապարակման նպատակով:

Առդիր՝ 12 էջ:

Հարգանքով
տնօրենի պաշտոնակատար՝ Մ. Սարգսյան

Կատարող՝ Ֆինանսահաշվային և գնումների կազմակերպան բաժին
Ա. Մխիթարյան հեռ. 095 95 81 05

Հաստատված է
«ՍԵԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/1»» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերով
գնումներ կատարելու ընթացակարգի հանձնաժողովի
2014թ. «փետրվարի» «11»-ի թիվ «1» որոշմամբ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

Հ Ր Ա Վ Ե Ր

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում « ՍԵԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մինչև 2014թ. փետրվարի 24 -ը, ժամը՝ 14:00-ը:

Հայտերը կբացվեն 2014թ. փետրվարի 24 -ին, ժամը՝ 14:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների համար վառելիքի ձեռքբերում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ***(Հավելված N 5)***, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ ***(Հավելված N 5.1):*** Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

secig@mail.ru

Գնումների պատասխանատու՝ Աննա Մխիթարյան

Հեռախոս՝ (096-601-101/:

Պատվիրատու՝ «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

ՎԱՌԵԼԻՔԻ (ԲԵՆԶԻՆԻ) ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N _____

«-------»---------- 2014 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետ՝ Գնորդ), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Մ. Սարգսյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ---------- (այսուհետ՝ Վաճառող) ի դեմս տնօրեն ----- ----------, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները (այսուհետ՝ Ապրանքներ), իսկ Գնորդն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքները և վճարել դրանց համար:

2. Վաճառման պայմանները

2.1. Վաճառողը Ապրանքները հասցնում է Գնորդին:

2.2. Ապրանքները վաճառվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Գնորդն իրավունք ունի՝

3.1.1. Ապրանքները սույն պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չվաճառելու դեպքում հրաժարվել Ապրանքներից.

3.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող ապրանքներ.

ա) չընդունել Ապրանքները՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքները սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքներով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը,

բ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել Ապրանքների համար վճարված գումարը.

3.1.3. Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդն Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանքներ՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքներ այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտվել է սույն պայմանագիրը.

3.1.4.1. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) վաճառվել է անպատշաճ որակի Ապրանքներ, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքների վաճառման ժամկետը,

3.1.5. Ընդունել ապրանքները և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2. Գնորդն պարտավոր է՝

3.2.1. Կատարել սույն պայմանագրին համապատասխան վաճառված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները.

3.2.2. Վաճառողի հանձնած Ապրանքներից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքների պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3. Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը.

3.2.4. Ապրանքների քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքների բնույթից և նշանակությունից:

3.3. Վաճառողն իրավունք ունի

3.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում սույն պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող վաճառված Ապրանքները.

3.3.2. Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունները խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանքներ՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով.

3.3.3. Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում վաճառված սույն պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող Ապրանքների համար իրեն վճարման ենթակա գումարը.

3.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ վաճառել Ապրանքները: Վաղաժամկետ վաճառված Գնորդի կողմից ընդունված Ապրանքները հաշվարկվում է հաջորդ փուլում վաճառման ենթակա ապրանքի հաշվին:

3.4. Վաճառողը պարտավոր է՝

3.4.1. Գնորդին հանձնել սույն պայմանագրի 1.1 կետուն նշված տեխնիկական բնութագրին համապատասխանող Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում.

3.4.2. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանքներ.

3.4.3. Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքների որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր.

3.4.4. Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2. կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքները կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքները պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծաղսերը.

3.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժերը և տուգանքը.

3.4.6. Գնորդին հանձնել Ապրանքների պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը.

3.4.7. Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները.

3.4.8. Սույն պայմանագրի կատարման /կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքների գինը և վճարման կարգը

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ ---------- (----------) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով: Ապրանքների գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2. Գնորդն իրեն վաճառված Ապրանքների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքների համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են՝ սակայն ոչ ուշ 2014 թվականի դեկտեմբերի 23-ից:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1. Վաճառողը երաշխավորում է վաճառված Ապրանքների որակի համար:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրությամբ: Վաճառողը՝ Ապրանքների հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2. Արձանագրությունն ստորագրվում է, եթե վաճառված Ապրանքները համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Գնորդն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3. Գնորդն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված՝ վաճառման ժամկետների պահպանման համար:

7.2. Վաճառողը կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին անհամապատասխան ապրանք վաճառելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4. Սույն պայմանագրի 7.2 և 7.3 նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարից:

7.5. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նածատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7. Տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2.Սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Սույն պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի(Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակումՎաճառողի կնքած այլ գործարքներըև դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.5Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2 և 3 հավելվածները՝ բաղկացած է 3 (երեք) թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ՍԵՀՆ «Սպորտի և երիտասարդական ծրագրերի Իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ	
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Սարյան 22, 16-րդ հարկ	
Հ/Հ 900011111110	
ՀՎՀՀ 02599765	
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	
Տնօրենի պաշտոնակատար՝	
---------- Մ. Սարգսյան	
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
---------- —— -2014 թ. ին կնքված
N ՍԵԾԻԳ----------ՇՀԱՊՁԲ-11/1 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Գնման առարկայի անվանումները	Չափի միավորը	Տեխնիկական Բնութագիր
1	2	3	4
1.	Բենզին ,,Ռեգուլյար,,	լիտր	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15 ^{0} C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C_5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»:

Գնորդ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության
<<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ
Հասցե՝ Ք.Երևան, Սարյան 22,16-րդ հարկ
Հ/Հ 900011111110
ՀՎՀՀ 02599765
ՖՆ գործառնական վարչություն
Տնօրենի պաշտոնակատար՝

_____ Մ.Սարգսյան

Կ.Տ.

Վաճառող

Հավելված N 2

«----------»----------2014 թ կնքված

N ՍԵՇԻԳ_____ ՇՀԱՊՁԲ-11/1 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռք բերվող ապրանքի անվանումը				I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ		Ընդամենը	
N	Անվանումը	Չափման միավոր	Միավորի գինը /դրամ/	քանակ	գին	քանակ	գին	քանակ	գին	քանակ	գին	քանակ	գին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Բենզին ,,Ռեգուլյար,,	լիտր		369.6		462		462		554.4		1848	

Գնորդ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության <<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ

Հասցե՝Ք.Երևան Սարյան 22, 16-րդ հարկ
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ 900011111110
ՀՎՀՀ 02599765
Տնօրենի պաշտոնակատար՝ _____Մ.Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3

<<------>> ----------2014 թ. կնքված

ՍԵԾԻԳ_____ՇՀԱՊՁԲ-11/1 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ներկայացվում է աճողական կարգով

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի,ծառայության անվանումը	Ընդամենը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2014թ. Պետական բյուջեի միջոցների հաշվին,ընդ որում			
		1 եռամսյակ	2 եռամսյակ	3 եռամսյակ	4 եռամսյակ
1	2 = (3:6)	3	4	5	6
Բենզին <<Ռեգուլյար>>	100%	20%	45%	70%	100%
Ընդամենը	100%	20%	45%	70%	100%

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն <<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ

Հասցե՝Ք.Երևան, Սարյան 22, 16-րդ հարկ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

հ/հ 9000111111110

ՀՎՀՀ 02599765

Տնօրենի պաշտոնակատար՝ ---------- Մ. Սարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 5
«ԳԱԿ -ՇՀԱՊՁԲ -11/1» *ծածկագրով*
ընթացակարգի հրավերի
«ՍԵՇԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
_____ի կողմից N ՍԵՇԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով հայտարարված ընթացակարգի ----------չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

----------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
----------:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

---------- ----------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____201_թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1
«ԳԱԿ -ՇՀԱՊՁԲ -11/1» *ծածկագրով*
ընթացակարգի հրավերի
«ՍԵՓԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N *ՍԵՓԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/1* ծածկագրով ընթացակարգի հրավերը(ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
.....	.....			

*** 3-րդ սյունյակում նշված ''Արժեքը'' ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
**** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____201_թ.
(ամսաթիվը, ամիսը)